

Երանի~ եկեղեցի շինողաց...

2011թ.-ի նոյեմբերի 21-ին Հովիվուդի Ս. Հովհաննու Կարապետ եկեղեցու «Ղազանչյան սրահում» տեղի ունեցավ ծխական արտահերթ ժողով, որի օրակարգում եկեղեցու վերաշինության խնդիրն էր: Ժողովին ներկա էին Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմի Առաջնորդ, Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, եկեղեցու ծխական խորհրդի շուրջ 50 և Հոգաբարուների խորհրդի 8 անդամներ: Բացման խոսքով հանդես եկավ եկեղեցու Հոգաբարձուների խորհրդի նախագահ Հավհաննես Գավթյանը, այնուհետև եկեղեցու հովիվ, արժանապատիվ Տ. Մանուկ ավագ քահանա Մարգարյանն իր խոսքում կարևորեց եկեղեցու վերաշինության խնդիրը, շեշտելով, որ «Տարիների մեր անկեղծ երազանքն ու աղոթքն է եղել, Հովիվուդի սրտում տեսնել Հայաստանն ու հայությունը խորհրդանշող աղոթքի տուն»: Այնուհետև Տեր Հայրն անրադարձավ եկեղեցական կառույցի բազմաթիվ և գրեթե անլուծելի խնդիրներին:

1920-ականներին կառուցված փայտե շինությունը մոտավորապես 40 տարի առաջ, փորձել են հարմարեցնել հայ եկեղեցական ու ծխական պահանջներին, որն այսօր իր անհարմարություններով հանդերձ, չի համապատասխանում երկրաշարժային գոտու անվտանգության չափանիշներին: Վերանորոգությունը գրեթե նույն ծախսերն է պահանջում, ինչքան վերակառուցումը: Ճիշտ է, տնտեսական ճգնաժամի պայմաններում նմանատիպ ծրագրի կազմակերպումն ու իրագործումը հսկայական միջոցներ է պահանջում, սակայն վերակառուցման ծրագրով խանդավառ ներկաները հավատացած էին, որ երկնալսաց հայկական գոհարը նոր սկիզբ պիտի դառնա ամերիկահայության հոգևոր վերազարթոնքի համար: Տ. Մանուկ ավագ քահանա Մարգարյանը խոստացավ, որ շինարարության ընթացքում ծխական արարողությունները պիտի շարունակվեն եկեղեցուն կից

սրահում:

Խոսքի վերջում Տեր Հայրը ներկայացրեց փաստաբան Էդգար Խալաթյանին, որն իր անգնահատելի ու անշահախնդիր ծառայությունն էր բերել նախնական աշխատանքների կազմակերպմանը:

Համայնքի հայտնի ճարտարապետներից Վարդան Ջանգոզյանը ներկաներին ծանոթացրեց շուրջ հնգամյա իր աշխատանքի արդյունքը, ըստ որի նորակառույցը վեր է խոյանալու այսօրվա եկեղեցու տեղում և ունենալու է մոտ 90 ոտք բարձրություն: Նախամուտքում լինելու է գավիթ, խորանին կից՝ ավանդատներ: Նախատեսվում է 600 նստատեղ: Եկեղեցու արևմտյան մասը լինելու է երկհարկանի, վերջինս ծառայելու է երգչախմբի և քահանայից սենյակի համար: Շինության գետնահարկում ավելացվելու են, ինչպես նոր կայանատեղեր, այնպես էլ փոքրիկ սրահ՝ իր բոլոր հարմարություններով: Եկեղեցին լինելու է կենտրոնագմբեթ և համապատասխանելու է հայկական ավանդական եկեղեցական ճարտարապետության կանոններին:

Շինարարության պատասխանատու Գառնիկ Շահբազյանն նշեց, որ աշխատանքները նախատեսվում է ավարտել 18-24 ամիսների ընթացքում: Ամենաժամանակատար խնդիրն այն է, որ արտաքին երեսպատման քարերը պետք է բերվեն Հայստանից:

Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան Թեմի Առաջնորդ, Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանն իր խոսքում նշեց. «Պարզ շինարարության մասին չէ որ խոսում ենք, այլ Աստուծո տան: Մենք սիրով ու անսակարկ նվիրումով մեր երախտագիտության ու հավատարմության բաժինն ենք բերելու կառուցմանը, որպեսզի Բարձրյալն էլ մեզ արժանի դարձնի իր օրհնությանը:

Թղթից իրական եկեղեցին տեսնելու հաճույքը բոլորինս է»:

Եկեղեցու վերաշինության հարցի քննարկումների արդյունքում հանձնարարականներ տրվեց եկեղեցու պաշտոնեությանն ու

Հոգաբարձուների խորհրդին, որպեսզի պատրաստեն մանրամասն շինարարական և ֆինանսական հաշվետվություններ, որոնք պիտի դրվեն «Ծխական տարեկան ժողով»-ի քննարկմանն ու հաստատմանը: Այն տեղի է ունենալու 2012թ.-ի փետրվար ամսին:

Հովհաննես սարկավազ Գունբույան